ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ Մասիս համայնքը 2021թվականի դեկտեմբերի 17-ից հետո միավորվել է և 2021թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ներառում է բոլոր 27 համայնքների եկամուտների և ծախսերի կատարողականը, հաշվետվությունը կներկայացվի ամփոփ տեսքով:

Եկամուտներ

Մասիս համայնքի 2021թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 2 867 674 322 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 3 025 541 440 դրամ, կամ տարեկան մուտքերի առաջադրանքը կատարվել է 105,5%-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 28 905 322 դրամի դիմաց կատարվել է 1 188 183 240 դրամ կամ կատարվել է 115,5%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 622 059,9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 767 243,1 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 117,7%-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 103,2%-ով, գույքահարկինը՝ 731,4 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 116,3%-ով, տեղական տուրքերը՝ 117,1%-ով, պետական տուրքերը՝ 160,1 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 35477,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 41529,9 հազ. դրամ, այդ թվում՝ Պետական տուրքերի առաջադրանքը՝ նախատեսված 14000,0 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել է 22408,4 հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 1 832 129,9 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 382 319,7 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել է 426168,4 հազ. դրամ,կամ կատարվել է 111,5%-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 99,9%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 89,6%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 5228,3 հազ. դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 264880,4 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 232252,2 հազ. դրամ կամ կատարվել է 87,7%, որից աղբահանության վճարների մասով 117818,1 հազ. դրամի դիմաց գանձվել է 104534,6 հազ. դրամ կամ կատարվել է 88,7%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 82,5 %-ով, երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 98,8 %-ով:

Ծախսեր

2021 թ. համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան ծախսերը կատարվել է 88,7 %-ով՝ 2864278,5 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 2539486,7 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 961866,3 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 89,1 %-ով:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված 67935,6 հազար դրամ նախատեսված ծախսերը կատարվել է 64,9 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի 175569,8 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 96,9 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ 124513,4 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 77,9 %-ով:

Առողջապահության ոլորտում նախատեսված 5850,0 հազար դրամ ծախսերը կատարվել է 75,1%-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով 137700,1 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 80,2 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով 970555,7 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 94,3 %-ով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար 114650,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 78,8 %-ով:

Մասիս համայնքի 2021թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3346748,9 հազ. դրամի դիմաց կատարվել է 2800401,6 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1336954,2 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 829155,6 հազ. Դրամ, ապացված կապիտալ սուբվենցիա՝ 634291,8 հազ. դրամ:

2021 թ. բյուջեի Ֆոնդային մասի ծախսերը կազմել է 2 004 015,6 հազ. դրամ, որից կապիտալ ծախսերը ըստ ոլորտների կազմել է՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 269969,3 հազար դրամ,

բ/ Պաշտպանության ոլորտում՝ 350,0 հազար դրամ,

գ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում 314303,2 հազար դրամ,

դ/ Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտում 209928,3 հազար դրամ,

ե/ Առողջապահության ոլորտում 77498,0 հազար դրամ ,

զ/ Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման ոլորտում 97734,9 հազար դրամ,

է/ Կրթության ոլորտում 205076,3 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ